

ձուկէլ, որովհետեւ նա կը տանէր իւր հետ նոցա իշխան Բազարաթին. երկրի իշխաններէց եւ մեծամեծներէց իւրաքանչիւր ուղարկեց հնծեկազոր եւ հետոտ զըսպուճգ նոցա օգնութեան: Խուժեցիչ յարակեցան Խուսփի վերայ Տարծուճ, մինչ նորս մարդիկ ջրած էին գիւղերում, սպանեցին նորան եւ յափշտակեցին նորս ամբողջ բռնակ:

Հաւատացելոց ամբողջութեամբ Ամուտավայկիլ ասպ կարգեց Հայաստանի վերայ կառավարիչ Բուզայ մեծին. սա եկաւ Բիթլիս եւ հերթակալեց Մուսայ Ի. Զուբարին: որին հաճոյ կը Խուսփի սպանումն եւ որ՝ պահելով Բազարաթի կողմէ՝ օգնած էր այս իրազօրծել: Բուզայ պատերազմեցաւ Խուժեցոց հետ, որի մասնեց եւ գերեց նոցանից մեծ բազմութիւն: Ապա պաշարեց Աշտու. Համ. զայ Ի. Գագիկ Ասպուրականի իշխանին, ստիպեց նորան վախ իջանել իւր ամրոցից եւ տարաւ նորան Սամաույ:

Բուզայ տրչուեց Ալբր, յաղճեց Իսահակ Ի. Իոմայլին եւ սպաննել աւեց նորան կապանքների մէջ՝ Կաւանձով Ալբր նա (այնպէս) փոխադրեց Ազուանից բնակիչներէց: Ահհասարակ խաղաղացրեց Սիտականի Հայերին՝ պատասխ, խուճարաբար բրիտանականներն եւ այլոց, մինչեւ որ բնակարգեցաւ երկիրը արգարութեամբ, որ իբան նմանք չունէր: Ապա մեկնեցաւ Սամաույ 241 թ.

Վերջ Ա մասին:

Բ. ՆԱԱԹՆԱՍՑ



### Մ Ա Ց Ե Ն Ա Ռ Օ Ս Ա Կ Ա Ն

« 1868 »

Պատկերազարդ Օրացոյց Հանդէս 1904, Ծ. Թոփչեան սպ. Թիֆլիս 1903:

Շատ չեն հայերէն լեզուա հրատարակուած Օրացոյցները եւ այս քանի մը հատին հրատարակիչներն ալ փոխանակ ընտիր, շահաւէտ եւ ժողովրդեան մտաւոր զարգացման ծառայող նիւթերով անոնց սակաւաթուութեան տեղն ըստ իմիջ լեցնելու, « Իբանց հրատարակութիւնների միջոցով տարածում են ժողովրդի մէջ այնպիսի նիւթեր, որոնք ամենայն իրաւամբ կարող են մտաւոր բարոյական թոյն համարուել... կարծես նպատակ են գրել՝ ագիտութեան աւելի թանձր քօրով ծածկել միամիտ ժողովրդի մտաւոր հզօրացնել եւ սխտեմատիկ կերպով ամրացնել նրա սնտիպապաշտութիւնը, նախապաշարմունքն ու կուլտուրական յետաձայնութիւնը:» Այս խօսքերով Ե. Թոփչեան իւր « 127 » պատկերազարդ Օրացոյցին մէջ ուրիշ Օրացոյց հրատարակողաց դէմ բողոքելէն վերջ՝ կը յայտնէ թէ ժողովրդեան այս խեղճ

վիճակին զարման տանելու համար է, որ ինքը՝ շատ մը գրագէտ ու մասնագէտ անձանց աջակցութեամբը՝ ձեռք զարկաւ իւր « 127 », սեղանի, պատի եւ գրպանի Օրացոյցներն հրատարակել: « Որոնք բուն նպատակն է գիտութեան լըս ստիւթ ժողովրդի խաւար խաւերում, օգտակար ու անհրաժեշտ գիտելիքն տարածել հասարակութեան լայն շրջաններում եւ ընթերցանութեան նիւթ մատակարարել...»

Թոփչեանին « 1868 » տեղակ Օրացոյցը (որուն վրայ է մեր մատենախօսականը) ստուգիչ իւր դիտած նպատակին համեմուտ ամէն առաւելութիւններով ու յստիկութիւններով օժտուած է. այնպէս որ եւրոպական այս կարգի օրացոյցներէն վար չէ մնար: — « 127 » Օրացոյցը երկսիւն 500 էջ ընդարձակ մասեան մըն է, մաքուր թղթի վրայ եւ գեղեցիկ առաւելով տպուած: Միայն թէ գրի եւ թուանշանի սխալները բազմաթիւ են: Այս վերջիններուն շարուածքին ամենեւին մտադրութիւն չէ եղած. մէկը վեր, միւսը վար, հաստ ու բարակ մեծ ու պղտիկ թուանշաններ քովէ քով շարուած են, որով գրքին ագեղութիւն մը կը պատճառեն: Սակայն ամոնք գրքին մեծամեծ բարեմասնութեանց քով եւ ոչ իսկ նկատի կ'առնուին. Թոփչեան իրեն Օրացոյցին մէջ միայն այնպիսի անձինք աշխատակից ընտրած է, որոնց անունը հայ նշանաւոր գրագիտաց կամ մասնագիտաց կարգը դատուած է: Անոնցմէ յիշենք հետեւեալները՝ իրենց գրած յօդուածներուն կարգաւ. Պերճ՝ Պօռչեանց, Վարդօ, Հ. Առաքելեան, Բժ. Ա. Բուգուղեան, Բժ. Վ. Արծրունի, Գ. Կո. Փաշայեան, Տիկ. Հրանդշ, Ա. Ահարոնեան, Յովհ. Թուամանեանց, Ա. Չօպանեան, Աշ. Յատուրեան, Ա. Իսահակեան, Ղ. Ալալայեան, Ստ. Մալխասեանց, Լէօ. Ե. Թոփչեանին « 127 », Օրացոյցին ուրիշ մէկ առաւելութիւնն ալ է դոփխեւորը բլլալը: Քանի մը փոքր պատկերները զանց ընելով յիշելք հետեւեալները. Ղիկողայոս Բ. կայսր Ռուսաց, Ախալցխացի, Շամսխեցի հայ տիկնայք եւ Ղաղախեցի հայ սար: Յուզուած ծովը, քանի մը քաղաքներու տեսարանները, Բաֆֆի, Տիկ. Սիրանոյշի եւ ուրիշ քանի մ'անձանց պատկերներ: Գրքին ետեւը չորս հաստ թղթի վրայ գունասիպ Վ պատկերներ տպուած են: Ահա այս է « 127 » տեղակ Օրացոյցը՝ ընդհանուր պատկերը, տեսնելք այժմ թէ ինչ նիւթեր զետեղուած են մէջը, որմէ գրքին արժէքը առաւել եւս պիտի երևայ:

Մինչև էլ 66 օրացուցական մասը բռնած է, որուն մէջ շորս եղանակաց վրայ գեղեցիկ յօդուածներ ալ կան Պերճ Պաշտանցի գրէն ելած էլ 63. Յօրհանգիստն ի վերնագրով գրուածք մը՝ կոխի կերպով տեղեկութիւն կու տայ այլեւայլ ազգաց մօմարներուն վրայ: Ասոր կը յաջորդէ Երեմիայի վերնագրով յօդուածը, որուն մէջ շատ համառօտիւ աշխարհքիս գանազան կրօններու վրայ կը խօսուի: Ենտոյ մանրամասն կերպով Լուսաւորչական շայտոյ այժմեան եկեղեցական առաջնորդներուն անունները կը յիշուին. իսկ կաթողիկէ ու բողոքական շայտոյ հաջիւս ամենամեծ առաջնորդաց անունները կը յիշատակուին: Ետջորդ յօդուածը Տեպիտոն կը կոչուի, որ ինչոպական գանձարարի, ինչոպական մարկաններու վրայ աւելի ուսական հպատակաց հարկաւոր տեղեկութիւններ կը տրուին. դարձեալ ոռուի շահերու վրայ կը խօսուի եւն: Ըստ օգտակար է այն առևտարը, ուր գրեթէ բոլոր աւերութեանց դրամներուն համեմատութիւն կ'ըլլուի: Հետաքրքրական է ժողովրդեան համար՝ հեռագրի, նաւագնացութեան, երկաթուղոյ, այլ եւ այլ քաղաքներէ ուրիշ քաղաքներ կամ երկրներ ծամորդութեան համար պէտք եղած տեղեկութեանց «Լոյսի» մէջ գեղեցիկ կերպով նշանակուած ըլլայը: Խորհրդադատու կոչուած յօդուածին մէջ գրած են Գարեգին Մեծատուրեան եւ Գ. Ղազարեան: Առաջինը կը խօսի «Հողագործութեան», իսկ երկրորդը կաթնամանսեռութեան վրայ, որ կովին կաթին հիւանդութեան նշաններն եւ անոր դէմ ինչ միջոցներ ձեռք առնուլը կը պարզէ. կաթի գանազան տեսակներ այսպէս ջրային կարմիր, գեղին, աղի... յառաջ կը բերէ եւ անոնց ամենուն ինաճըր կը կարգէ: Դարձեալ Ղազարեան «Մեծատուրեանութեան» վրայ ոչ համառօտիւ կը խօսի:

2. Առաքելեան, որ Պարսկաստանի շայտոյ վրայ շարք մը յօդուածներ գրած է արգէն, «Լոյս» Օրացոյցի մէջ ալ անոնց վրայ ընթերցողաց տեղեկութիւն հաղորդած է (էջ 168—176): Գրուած են նոյնպէս Կիպրոսի, Ամբրիկայի, Պուրկարիայի, պարսկական Քրդաստանի շայտոյ վրայ ալ: Ասկէ վերջը կու գայ Ե. Թափչեանի ընդարձակ յօդուածները Տեպիտոնի վերնագրով (էջ 194—225). Յօդուածագիրը նախ շառի պատմութիւնն ընդէն վերջը, նախապէս գործին գանազան կերպարանափոխութիւններուն, փոխադրութեան կերպին,

վաճառականութեան, արդիւնագործութեան վրայ կը խօսի: Կը ստորագրէ նաւթի բանւորներուն անտանելի վիճակը...: Երկրորդ յօդուածը Վովկասի հանդերձ վրայ է: Երրորդ յօդուածով կը խօսի Կովկասի գործարանական արդիւնագործութեան: Վերջին յօդուածն է աշխարհիս հարստութեան վրայ: Բաւական տեղ բռնած են նա եւ ռուսացուցական եւ բժշկական յօդուածները (էջ 226—260), որոնց գրիչները հայ նշանաւոր բժիշկներ են: Կաննոց հորէր շարք վերնագրով յօդուածին գրիչն է Տիկ. Հրանտշ, որ գանազան երկիրներու կանանց շարժման վրայ խօսելով՝ կը շօշափէ նա եւ հայ կանանց մէջ մտաց ազատագրական շարժման խնդիրը:

Այսպէս գիտական գրուածքներով միայն ընթերցողը կրնար ստուգելու աճած մնալ, եթէ կարգաբաւ թեթեւ նիւթեր ալ չունենար: Այս առաւելութիւնն ալ ունի «Լոյսը» ուր հիւրընկալուած են Վիդէր արձակ ու շափական Բունտեղանիւնները եւ Թորթանուիւններ օտար գրականութիւններէ: Ասոնցմէ վերջը Հալիտոն վերնագրին առկ կը խօսուի փեխոփայութեան մէջ ըլլալուն, Մանկավարժութեան, Նկարչութեան... վրայ, բայց մանաւանդ հետաքրքրական է Գ. Աշխարանցի Վարդավաթէ Վարդաւոր յօդուածը:

Նշանաւոր գեղարտիւ սուրբի վերնագրին առկ յօդուածներուն հեղինակներն են. Սա. Մախասեան՝ որ շայտոյ գրեւոր գիւտին 1500ամեակին առթիւ կը գրէ, Լէօ Բաֆֆիի մահուան 15ամեակին առթիւ անոր կենսագրականը կ'ընէ, Գ. Նշեան՝ Տիկ. Միրանշի 30ամեայ բեմական գործունէութեան վրայ կը խօսի: Ասոնց կը յաջորդէ Մաքսիմ Գօրկիի թափառական գրագէտին կենսագրութիւնը: Վերջապէս Պատմութեան նշանաւոր գիտացցանի մը կայ, ուր քանի մը պատմական սխալներ կան, որոնցմէ միայն խաչակրաց արշաւանքներուն նկատմամբ եղած սխալները յիշենք. խաչակրաց Առաջին արշաւանքը 1086ին գրուած է, մինչդեռ 1095ին սկսուած կամ աւելի 1096ին: խաչակրաց վերջին արշաւանքը 1291ին գրուած է, ուր որ նոյն տարին Պաղեստինի մէջ թրիստոնէից ունեցած վերջին քաղաքը Պաղատայիսը Սարակինոսներուն ձեռքն ինկու, իսկ խաչակրաց վերջին արշաւանքը 1270ին Լուզովկան Թուրքա: Մանաւոր կերպով շայտոյ պատմութեանն ալ երեւելի դիպաց յիշատակութիւնը գրուած է, յորում առասպելներու ալ թուրք

յարմարցուած են: Դրուած է նա եւ Հայոց կաթնուղիկոսաց շարքը: Ասոց սկիզբը մինչեւ Ս. Թագէտո կը հանուի, որուն կը յաջորդեն Ս. Բարթուղիմէոս, Ս. Չաքարիաս, Ս. Ձեմնաս, Ատրենքեհ, Մուշեղ, Շահէն, Էւսարշ...: Տերտուղիանոսին յիշած Ս. Մեհարեանն ալ ասոց կարգը դասուած է: Մինչեւ ե՛րբ այս կերպով պիտի աւանդուի մեր պատմութիւնը: Կրքին վերջը գրուած է պատկերաց մեկնութիւնը:

Ա՛հա «Լոյսին» բովանդակութիւնը, որմէ կը տեսնուի, թէ ինչչափ բազմակողմանի նիւթեր կը պարունակէ որով ամենուն մատչելի Օրացոյց մըն է, զոր գիտութեան փոփոքող ամեն անհատի ընթացիկ կերպով կը յանձնարարենը: Ը մաղձենք Ե. Բոսիշեանին սկսած շահեկան ձեռնարկութեան մէջ յարասեւութիւն եւ կը յուսանք, որ թէ՛ ժողովուրդը գնահատել գիտնայ Մեծապ. Տնտեսագէտին այս աշխատութիւնը, ինքն ալ ժողովուրդը յաջորդ տարիներու մէջ աւելի կը գոհացընէ: Հ. ԱՄՌ.



**Հ Ա Յ Ո Ւ Մ Ո Ւ Յ Ո Ւ Մ**

Մեծ. Հ. Ղեւնդ. Ա. Ալիշանի վերջին յաղթ գործքն եղու 800 մեծագիր էջերէ բաղկացած «Հայասպատում» կոչուած գրութիւնը՝ որ Միխիմարեան Միտրանութեան 200 անայ Յօրեղանին նուիրուած է իբր յիշատակարան: Բովանդակ մատենը բազմաթիւ պատկերներով զարդարուած է, որոնցմէ շատերը թէպէտ ձեւերտիկ ապուած ուրիշ գրոց մէջ արդէն հրատարակուած էին, բայց եւ այնպէս շատ պատշաճ էր, որ «Հայասպատում» մէջ վերստին տպուէին: Այս պատկերներէն շատերը յարմարցուած են, բայց կան նա եւ իրականութեան վրայէն առնուած բազմաթիւ պատկերներ ալ, որոնցմէ խիստ հետաքրքրականներէն մէկ քանին յառաջ բերել կ'արժէ: Այսպիսի են. 1. Մլքէ թագուհւոյն աւետարանին գունատիպ պատկերը (էջ 80, Ա. Մասն), 2. չեմականձին Մուշեղ եւ Հոնն յաղթահարուալ (էջ 137, Բ. Մասն), 3. Աշուշայ բռնաշուխ վրաց (էջ 148), 4. Ըիրիմ՝ Աշուշայ Ողորդակ (էջ 301), 5. Կիբե Բ. Դոստանդի կաթողիկոսի (էջ 497)...: Զմոռնաք ըսելու, որ գրքին սկիզբը Մեծարգոյ

Հեղինակին կենդանագիրը զետեղուած է, իսկ գրքին վերջը Հ. Մ. Չամչեանինը: «Հայասպատում» շորս հատորի մէջ փոքրագիր արտատպութիւն մ'ալ ունի. որուն մէջ ամենայն ինչ նոյն պահանջն է, միայն պատկերները գանց առնուած են: Այս կանխաբանութիւնն ընելէն վերջը՝ պիտի խօսինք:

1. «Հայասպատում» յօրինուածութեան, նպատակին ու բարեմասնութեանց վրայ.
2. «Հայասպատում» թերութեանց ու վրիպակներուն վրայ:

**Ա.**

«Հայասպատում» յօրինուածութիւնը, նպատակն ու բարեմասնութիւնները:

1. Հ. Ալիշան իւր մատենը երկու գլխաւոր մասանց բաժնած է: Առաջին մասը՝ որ Պատմիչը Հայոց վերնագիրը կը կրէ, գրքին սկիզբէն կը սկսի եւ կը հասնի մինչեւ էջ 139: Մնացած 625 էջերը կը կազմեն «Հայասպատում», Երկրորդ մասը, որ վերնագիր ունի Պատմութիւնը Հայոց: Առաջին մասին մէջ տակաւին բնիկ հայ պատմաց վրայ խօսելու շնորհիւ՝ Մեծ. Հեղինակը երեք Դրուագով նախապատրաստութիւն մը կ'ընէ (էջ 10—33): Առաջին Դրուագին մէջ կը խօսի. 1. պատմութեան էութեան, 2. պատմութեան տեսակաց, 3. մեր պատմագրոց թուոյն ու պատմութեանց կրօնեան եւ 4. մեր պատմագրաց արժէքին վրայ: Այս Դրուագին վերջը կը ընէ անծանօթ անձէ մը գրուած պատմագրաց ցանկ մը, ուր գրիչը 26 պատմագրաց անուններն յիշելէն վերջը կը յարէ. «Եւ այլ 36 պատմագիրք Հայոց, զորոց զանաւան չգիտեմ. եւ ընդ ամենայն պատմագիրք 62», Հ. Ալիշան այս 62 պատմագրաց վրայ «Նոյնչափ մ'այլ պիտի աւելնենք, կ'ըսէ, թէ ծանօթ եւ թէ անծանօթ պատմիչներ, Երկրորդ Դրուագին մէջ Հ. Ալիշան հայկական Դպրութեան յառաջ Հայոց վրայ յիշատակութիւն ընող պատմիչներու վրայ համառօտ տեսութիւն մը կ'ընէ, որոնց մէջ Մար Աբասին եւ մեհնաւան պատմաց ու վրայ վիպասանաց վրայ աւելի կը ծանրանայ: Երրորդ Դրուագի մէջ ալ Հայերը յիշող յոյն, լատին, ասորի եւ արաբացի պատմաց վրայ անցողակի յիշատակութիւններ ընելով՝ Դրուագները կը փակէ եւ կ'անցնի Բնիկ Նայ Պատմացը:

Ասոց մէջ առաջին բնիկ պատմիչ կը գնէ զԱգաթանգեղոս. երկրորդական պատմիչը